ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 73

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքը (Մեծամոր քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Մեծամոր համայնքի (Մեծամոր քաղաքի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքը (Մեծամոր քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-003-0101-0108 կադաստրային ծածկագրով 0.85658 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ցածրահարկ կառուցապատում (ԲՆԿԳ-1/1)	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքում գտնվող 04-003-0101-0108 կադաստրային ծածկագրով 0.85658 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում բարձրահարկ բնակելի կառուցապատում՝ 1-16 հարկ

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Մեծամոր քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Լ. Առաքելյան

Երևան, «27» «փետրվարի» 2025 թ.